ԳԱԲՐԻԷԼ ՊԵ. ՆԻԿՈՄԻԴԱՑԻ.— Աշկ. Գրիգոր վրդ. Էօ-տէմիշցիի. Զռ. 1799ին. եպս. և փոխ. 1813ին, Նա. Կեսարիոյ և Գաղատիոյ 1806ին. Զմիւռնիոյ, 1814-1815ին. կ'ընտրուի Պե. 1819ին. վարչական կարգադրութիւններու համաձայն կ'ուղեւորի Պոլիս 1824ին և կը նշանակուի առ. Զմիւռնիոյ վիճակին (1828-1834). կը վերադառնայ Երուսաղէմ, պաշտօնին գլուխը, 1834ին։ — 1839ին, կը տեղեկագրէ Յովհաննէս Ը. Կարբեցի կթղ.ին (1831-1842), Յունաց և Լատինաց կողմէն Ս. Համբարձման լերան վրայ Հայոց կառուցած վանքին ապօրինի քանդումը, և կը հայցէ հայրապետին աջակցութիւնը (Սիօն, 1872, էջ 64), Տեղեկագրին օրինակը հրատարակուած է։ Կը վախճանի 1840ին, և կը թաղուի Ս. Փրկչի վանքը, պատրիարքաց շարքին։ Իր տապանաքարին ընդօրինակութիւնն է հետեւեալը.

«Ի բարձրելոյն երգէ Սիրաք մեղեաց.
Այս դատաստան՝ բարէ՛ և զի վայելուչ.
Յապաղել յի՞մ նուազելոյս ի կարեաց.
Ընդ ո՞յր անոյշ. ոյր և անձն իմ ընկալուչ։
Գաբրիէլ եմ Սուրբ Աթոռոյս գահակալ.
Այլ Նիկոմիդ ծծել ետ լինձ զոգ նախկին.
Որ իմն էր բաղդ յայս աստիճան վերառեալ,
Ընդ փորձ անցոյց որպէս զոսկի քուրային։
Քսան երկու ամաց շրջանս ի գահիս.
Զիշխանութեան յաջս ընկալեալ գաւազան.
Զիմ չունչ վերջին յաւանդ թողի. ո՛վ չնորհիս,
Յայս սուրբ Սիօն յեցեալ յալիս ծերութեան։
Որ փառաւորի քո սուրբ անուն յայս կայան.
Տէր իմ Յիսուս, ուր և փայլի քոյդ շիրիմ.
Ի փոշ զուարթնոյն անդ անճառիցն ի խորան.
Հնչեա՛ յականջս, հանգի՛ր ծառա՛յ մտերիմ»։

Յամի Տեառն 1840 Ապրիլ 15. Ամաց 76։

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. Մբ. 1711ին, կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին։

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. Մբ. 1775-76, Նա. Քէրսոնի (Խրիմ).

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ԱԿՆՑԻ, Մբ. Հայրը՝ մտ. Գասպար, 1721ին կը միաբանակցեր. ՄՁ. թ. 42 Աւետարանը ունի յիշատակա-